

ՈՎՔԵՐ ԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Մ. Լ. ՇԱՀԳԵԼԳՅԱՆ

Խորհրդային Միության փլուզումը, աշխարհի երկրներ ուժային համակարգի վերացումը, մեր տարածաշրջանում տեղ գտած ռազմաքաղաքական փոփոխությունները մեր նոր կայացած պետությանը և ժողովրդին կանգնեցրին ռազմական և քաղաքական մի շարք բարդ հիմնախնդիրների հանդիման, որոնց լուծման համար առաջնային խնդիր է դառնում ճիշտ որոշումների ընդունումը: Հակառակ դեպքում մենք կարող ենք մեր երիտասարդ պետությունը ենթարկել հզոր հարվածների վտանգին: Այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ են մարդիկ, որոնք հասու են ընդունել քաղաքական որոշումներ և կարող են իրենց վրա այդպիսի պարտականություն վերցնել:

Քաղաքական որոշումների ընդունումը քաղաքական կառավարման գործընթացի բաղկացուցիչ մասն է: Հասարակության քաղաքական կյանքի դիտարկումը քաղաքական որոշումների ընդունման գործընթացի ուսումնասիրության միջոցով չափազանց կարևոր է, քանի որ թույլ է տալիս հասկանալու, թե ում ձեռքին է գտնվում փաստացի իշխանությունը:

Գիտական գրականության մեջ գոյություն ունեն որոշումների քաղաքական դասակարգումներ:

Ըստ դասակարգման մի ձևի որոշումները լինում են՝ ա) նեղ, որոնք վերաբերում են համակարգի բաղկացուցիչ մասերից մեկի ներքին գործերին և չեն ազդում մյուս բաղկացուցիչ մասերի վրա: Օրինակ՝ երկրի որևէ շրջանի կամ ճահագնի ներքին կյանքին վերաբերող որոշումներ, բ) միջին, որոնք նույնպես վերաբերում են որևէ բաղկացուցիչ մասի ներքին կյանքին, բայց արդեն անմիջական կամ միջնորդավորված ձևով ազդում են մյուս մասերի վրա, գ) լայն, որոնք վերաբերում են ամբողջ համակարգին: Նեղ և միջին որոշումները կարող են ընդունվել իշխանության տեղական մարմիններում, իսկ լայն որոշումները՝ պետական իշխանության մարմիններում: Ըստ դասակարգման մյուս ձևի որոշումները լինում են օպերատիվ, տակտիկական և ստրատեգիական*: Որոշումները կարող են դասակարգվել ժամանակային հիմքի վրա. 1) կարճաժամկետ (մինչև 1 տարի), 2) միջին ժամկետի (մինչև 5 տարի), 3) երկարաժամկետ (մինչև 15 տարի և ավելին): Որոշումները կարող են լինել նաև օպերատիվ, տակտիկական և ստրատեգիական: Որքան լայն և երկարաժամկետ է որոշումը, այնքան ընդհանուր է և գուրկ կոնկրետությունից: Տարբեր տեսակի որոշումները, փոխկապվածությամբ հանդես գալով, կարող են իրականացնել ինչպես անմիջականորեն, այնպես էլ միջնորդավորված: Օրինակ՝ պետության որևէ շրջանի համար ընդունված և նեղ թվացող քաղաքական որոշումը կարող է ազդել մյուս շրջանների վրա բնակչության արտահոսքի, ազգամիջյան, քաղաքական, սոցիալական բընույթի անկարգությունների, բնապահպանական վտանգի և այլ գործոնների միջոցով: Գերմանացի հետազոտող Հ. Գ. Մեյսները նշում է, որ ստրատեգիական որոշումներն անմիջականորեն ազդում են օպերատիվ և տակտիկական որոշումների վրա, օպերատիվ և տակտիկական որոշումները փաստական որոշումների նորմատիվ ուժի միջոցով միջնորդավորված ձևով ազդում են ստրատեգիական որոշումների վրա և այլն: Ծանկացած որոշման բնութագրման համար անհրաժեշտ է կիրառել դասակարգումների տարբեր ձևեր:

Ընդհանրապես քաղաքական որոշումների դասակարգումը դեռևս քաղաքականաչափ չի ուսումնասիրված, պակասում են հարցումների տվյալները, չկա մշակված կոնցեպցիա, իսկ գոյություն ունեցող դասակարգումներից ոչ մեկը համապարփակ չի ներկայացնում որո-

* Մենք նպատակահարմար չգտանք տվյալ դեպքում տակտիկական և ստրատեգիական տերմինները թարգմանել որպես մարտավարական և ռազմավարական:

1 ՏՃ՝ X. Г. Мейснер, Международный стратегический маркетинг. Современный мир в борьбе идей, М., 1990, вып. 2, էջ 255:

շումների բոլոր հատկանիշները: Հաճախ նկատեցի է նաև դառապարզման տրամադրական հիմքի անհստակ լինելը:

Քաղաքական որոշումների ընդունման գործընթացը հստակ պատկերացնելու համար անհրաժեշտ է միանշանակ պատասխանել հետևյալ հարցերին՝ ո՞վ է ընդունում որոշումը, ի՞նչ նպատակներ և շահեր ունի նա, և ինչ միջոցներ և մեթոդներ է կիրառում:

Քաղաքական որոշումները կարող են ընդունվել մեկ մարդու կողմից՝ միանձնյա, և մի շարք մարդկանց կողմից՝ խմբակային ու հանրային որոշումներ: Ընդ որում, որոշումը կարող է ընդունվել մեկ մարդու կողմից նաև այն դեպքում, երբ որոշման ընդունման գործընթացը արտաքինապես խմբակային տեսք է ստանում: Հանրային որոշումներն ընդունվում են, օրինակ, հանրաքվեների ժամանակ: Ըստ էության այստեղ խոսքը ոչ թե լայն իմաստով որոշման ընդունման, այլ արդեն մի շարք ձևակերպված որոշումներից որևէ մեկի ընտրության մասին է: Իս որոշումների գործընթացի նախալերջին փուլն է:

Խմբակային և միանձնյա քաղաքական որոշումներն ընդունվում են երկու մակարդակով՝ մասնագետ փորձագետների և քաղաքական գործիչների կողմից: Պետք է հաշվի առնել, որ չնայած փորձագետների կողմից առաջարկված որոշումները հիմնականում հանդես են գալիս առաջարկությունների և խորհուրդների ձևով, սակայն մեծ ազդեցություն են ունենում որոշումների վերջնական ընտրության վրա:

Յուրաքանչյուր քաղաքական գործիչ ձգտում է ունենալ փորձագետ-օգնականների մի խումբ, որոնց նա լիովին վստահում է և օգտվում է նրանց մասնագիտական գիտելիքներից: Սա մի կողմից թույլ է տալիս քաղաքական որոշումների ընդունման ժամանակ ավելի մեծ տեղ հատկացնել գիտական միջոցառումներին, սակայն մյուս կողմից կարող է հանգեցնել պրոբլեմի դիտարկման միակողմանիությանը և տարբեր գիտությունների ներկայացուցիչների կողմից իրենց հայացքների համապատասխանեցման դժվարացմանը: Իսկ քաղաքական գործիչները հսկայանում են, որ իրենք ստիպված են գործ առնել մի ամբողջ շարք միմյանց հետ պայքարող հայացքների հետ, և որ մարդկային փոխհարաբերությունները քաղաքական գործընթացի անհրաժեշտ բաղկացուցիչ մասն են²:

Անկախ փորձագետների և հետազոտական կենտրոնների կարծիքը շատ քարձր է գնահատվում նրանց անաչառ վերաբերմունքի շնորհիվ: Նրանց առաջարկությունները և խորհուրդները հաճախ հսկայության մեջ են մտնում քաղաքական գործիչների նպատակների հետ և զսպաշարիկի դեր են կատարում: Քաղաքական գործիչների պայքարի հիմնական նպատակը իշխանությունն է:

Պետության ընտրական օրգաններում քաղաքական որոշումների ընդունման վրա մեծ ազդեցություն են ունենում այն ընտրական տեղամասերի շահերը, որոնցից ընտրվել են պատգամավորները: Իսնականային (ֆեդերատիվ) երկրներում պետական իշխանության քարձրագույն մարմնի որոշումները պարտադիր են դաշնության (ֆեդերացիայի) սուբյեկտների համար: Սակայն մինչև այդ որոշումների ընդունումը, եթե պատգամավորները տեսնում են, որ այդ որոշումները անտեսում կամ ոտնահարում են իրենց տեղամասերի և իրենց շահերը, գործի են դնում բոլոր միջոցները այդ որոշումների ընդունումը խափանելու համար: ԱՄՆ-ում «Երկաթե եռանկյուն» (ոսպարոյունաբերական համալիր) ճշմարանն է՝ «Ընտրական տեղամասը պետք է լինի գաղափարախոսությունից բարձր», կամ, ինչպես նշում էր ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատի նախկին խոսնակ Տ. Օ'Նիլը, «Բոլոր քաղաքական գործողությունները ելնում են տեղական շահերից»³: Չնայած Հայաստանում ևս գործում է այդ սկզբունքը, սակայն հաճախ գերակշռում են անհատական, խմբակային և ֆրակցիոնալ (խմբակցական) դրոպապատճառները:

Քաղաքական գործիչները ընտրվելով որոշակի տեղամասի կողմից, որոշակի իշխանություն են ստանում, և բնականաբար, նրանք այդ իշխանությունը պետք է գործադրեն պաշտպանելու համար իրենց տեղամասի շահերը և իրենց իշխանությունը: Սակայն իշխանությունն իրականացնող կազմակերպությունում գործում են «խաղի այլ կանոններ», որոնք թելադրված են կուսակցական և ֆրակցիոնալ կապերով, հանձնաժողովներում ընտրվելու հնարավորությամբ և այլն:

Ահա այդ դեպքում քաղաքական գործիչները պետք է կարողանան համապատասխանեցնել իրենց անձնական և իրենց տեղամասերի շահերը: Ընդհանրապես քաղաքական գործիչները ընդունում են ստրատեգիական որոշումներ, և քանի որ դա չափազանց դժվար է իրականացնել՝ կիրառելով բացառապես ճշգրիտ գիտությունների մեթոդները, սպա նրանք դժվարանում են օգտվել միայն տվյալ բնագավառի փորձագետների օժանդակությունից:

² Տե՛ս X. Смит, Власть: «Правая игра» как функционирует Вашингтон, «Современный мир и борьба идей», вып. 2, 1990, էջ 205:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 209:

Վերոհիշյալը քաղաքական գործիչներին թույլ է տալիս կիրառել որոշումների սուբյեկտիվ, հաճախ ոչ գիտական չափանիշներ, որոնք հնարավորություն են ստեղծում, ազդելով ընդդիմախոսի բարոյական, արժեքային, մեճտալային հատկանիշների վրա, ստիպելու նրան ընդունել պոպուլիստական և կիրառական տեսակետից ոչ ճիշտ որոշումներ:

Իշխանության օրենսդիր մարմիններում ընտրվելով՝ քաղաքական գործիչները, երբեմն, աշխատելով քողարկել ընդունված սխալ որոշումների բացասական արդյունքներում իրենց մեղավորությունը, ձգտում են մեղադրել գործադիր իշխանություններին և իշխանության տեղական մարմիններին, շեշտելով, որ ոչ թե որոշումն էր սխալ, այլ դրա իրականացումը:

Գոյություն ունեն որոշումների ընդունման տարբեր մակարդակներ⁴, որոնք կարող են համապատասխանեցվել որոշումների տեսակների հետ:

Առաջին մակարդակ՝ կարծրացած: Որոշում ընդունողը հետևում է արդեն եղած ծրագրերին և փաստորեն միայն ընտրություն է կատարում: Նրան ներկայացվող գլխավոր պահանջն այն է, որ նա կարողանա ամբողջությամբ ըմբռնել իրադրությունը և վերջինս նմանեցնել հրահանգավորվածին: Որոշում ընդունողից պահանջվում է իրադրության հըստակ գնահատում, տրամաբանական մտածողություն և կատարողականություն: Քննադատական և ստեղծագործական մոտեցումը, ինտուիցիայի առկայությունը, երևութների գլոբալ ընկալումը պարտադիր չեն: Դեմոկրատական ռեժիմի պայմաններում այդ մակարդակում որպես կանոն ընդունվում են նեղ և փաստացի կամ օպերատիվ որոշումներ իշխանության տեղական մարմինների սահմաններում: Տոտալիտար ռեժիմի պայմաններում տվյալ մակարդակում ընդունվում են նույնիսկ ստրատեգիական որոշումներ իշխանության թլոր մարմիններում, քացառությամբ ամենավերին աստիճանը:

Երկրորդ մակարդակ՝ ընտրողական (սելեկտիվ): Այս մակարդակում որոշում ընդունողից պահանջվում է որոշակի նախաձեռնություն, ընդունված որոշման իրականացմանը խոչընդոտող գործոնների ընկալում: Ընտրողական մակարդակում ընդունվում են միջին օպերատիվ որոշումներ:

Երրորդ մակարդակ՝ հարմարվողական (ադապտացիոն), որի ժամանակ որոշում ընդունող անձը ոչ միայն ունի մի շարք նախապես ձևակերպված որոշումներ, այլև կարող է ձևակերպել նորերը: Որոշում ընդունողից պահանջվում է ստեղծագործական մտածողություն, ռիսկի գնալու վճռականություն, նախաձեռնություն ցուցաբերելու ընդունակություն և այլն: Այս մակարդակում ընդունվում են նեղ ստրատեգիական որոշումներ:

Չորրորդ մակարդակ՝ նորարարական (իննովացիոն): Այս մակարդակում ընդունվող որոշումները վերաբերվում են նոր ծագած կամ նախկինում լուծված չլինելու պատճառով ավելի բարդացած պրոբլեմներին: Որոշում ընդունողի վրա հսկայական ծանրություն է ընկնում: Նա պետք է ունենա լայն մտահորիզոն, սթափ ու միաժամանակ ստեղծագործական և վերացական մտածողություն, ինտուիցիա, ռիսկի գնալու վճռականություն և այլն:

Չորրորդ մակարդակում ընդունվում են լայն երկարաժամկետ ստրատեգիական որոշումներ: Որոշումների ընդունման գործընթացը իրականացվում է իշխանության քարձրագույն մարմինների կամ կազմակերպության վերին աստիճանների կողմից:

Նշված մակարդակներից առաջին երեքում որոշումների միանձնյա ընդունումը կարող է արդյունավետ լինել, իսկ չորրորդ մակարդակում նպատակահարմար է առնվազն խորհրդակցական խմբի ստեղծումը:

Քաղաքական որոշումները հաճախ ընդունվում են անորոշության պայմաններում, այսինքն՝ երբ դժվար է որոշել միջավայրի կառուցվածքը, ազդող գործոնները, չկան երկվայթների էզնահատման հստակ, նախօրոք որոշված չափանիշներ: Այդ դեպքում հսկայական նշանակություն է ստանում որոշում ընդունող մարդկանց սուբյեկտիվ գերադասումը: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ այն հաճախ դրսևորվում է ստիպազանց անսպասելի: Օրինակ, Գ. Վան դեր Մենըը հայտնաբերե է, որ վիճակախաղի մեջ մարդիկ գերադասում են 0,5, 0,7 և 0,8 հավանական շահույթ՝ քերող գործելակերպը և քացասական են վերաբերվում 0,6 և 0,9 հավանական շահույթ՝ քերող գործելակերպին⁵: Այս տվյալները կարող են պարադոքսալ թվալ, սակայն դրանք պետք է հաշվի առնվեն քաղաքական որոշումների ընդունման ժամանակ: Գերադասումը ուսումնասիրելիս հիմնական ուշադրույթունը կենտրոնացվում է դիսպերսիայի՝ վրա: Գ. Վան դեր Մենըը, Կ. Կուսբըը և Ա. Ֆիշերը գտնում են, որ հնարավոր է որոշել յուրաքանչյուր մարդու իդեա-

⁴ S. M. Вуткож, Д. Фрексие, Раскрепощенный менеджжер, Москва, 1991, էջ 127—133:

⁵ S. H. C. Van der Meer, Decision making, the influence of probability, variance and expected value on strategy in gambling. «Acta psychologica». 1963, N 21, էջ 231—259:

* Գիտաբնութագրի միջին արժեքից տատանման չափ:

լական դիսպերսիան: Իր գերադասածից բարձր կամ ցածր դիսպերսիա տվյալ մարդն ուղղակի չի ընդունի: Իմանալով քաղաքական գործիչների դիսպերսիան՝ կարելի է քա-վականին մեծ նշարտությամբ որոշել, թե տվյալ քաղաքական որոշման նկատմամբ նա ինչ վերաբերմունք կցուցաբերի: Դիսպերսիայի չափումը առավել հեշտ է իրականացնել մեկ անձի կամ փոքր խմբերի համար: Մեծ խմբերում այդ գործընթացը կարող է մեծ դժվարությունների հանդիպել: Տվյալ մոտեցումը, ըստ էության, քիմիկոսի ստանդարտ է:

Խոսելով խմբակային որոշումների մասին՝ պետք է նշել, որ դրանք որոշում ընդունող անձանց գաղափարների և կարծիքների մեխանիկական գումար՝ չեն: Այդ գործընթացին մասնակցող անձինք գտնվում են յուրահատուկ փոխհարաբերության մեջ, և յուրաքան-յուրը որոշակի դեր է կատարում: Այստեղ գլխավորը լիդերի դերն է, որը կազմակերպիչ է և համահմարող:

Խմբի անդամների փոխհարաբերությունները կառուցվում են նրանց դերին համապա-տասխան: Եթե խմբի անդամները լավ գիտեն միմյանց նպատակները, ձգտումները, «քա-շը», դերը, ապա որոշումների ընդունումը կարող է ընթանալ առավել սահուն: Ս. Բելքինը առաջ է քաշել դերերի մի տեսություն, ըստ որի խմբում դերերի բաժանումը կապված է մարդկանց անհատական հատկանիշների հետ: Նա նշում է հետևյալ դերերը. նախագահ՝ որոշումները ձևակերպող, նորոգիչ, թարմ հայացքով, խորհրդական (դատավոր)՝ պրակ-տիկ-կազմակերպիչ, ռեսուրսների հետազոտող, խմբի ոգի, հստակեցնող (finisher**):

Դերերի այս բաժանումը հատուկ է և ֆորմալ, և ոչ ֆորմալ կազմակերպություններին դեմոկրատական կառավարման դեպքում: Կ. Կ. Պլատոնովը գրում է, որ կառավարչական որոշումների խմբային ընդունման ժամանակ, որպեսզի որոշման ընդունման գործընթացը առավել արդյունավետ լինի, անհրաժեշտ է, որ խմբի անդամների թիվը չանցնի 15-ից, ժամանակը՝ մեկ ժամից, քննարկմանը մասնակցեն բոլորը և կառավարման ձևը դեմոկ-րատական լինի⁷:

Խմբերում կառավարման ձևը մեծ մասամբ կախված է լիդերից: Քաղաքականության մեջ դա առանձնապես մեծ նշանակություն ունի, քանի որ անմիջականորեն առնչվում է քաղաքական իշխանության հիմնախնդրի հետ: Յուրահատուկ օրինակ կարող է հանդի-սանալ Ռեյզանի նախագահությունը: «Սկզբում Ռեյզանը օգտագործում էր կարիների ան-դամների խորհրդակցությունները իբր թե պրոքլեմի քննարկման համար, սակայն շուտով պարզ դարձավ, որ այդ խորհրդակցությունները ավելի շատ նախարարների կարիների գործունեությունը վերահսկող գործիք էին, քան թե այնպիսի հավաքներ, որոնց ընթացքում նախագահը քաղաքական որոշումներ էր ձևակերպում»⁸: «Կարմենը հետագայում նշում էր, որ դա յոթ որոշիչ ձայներից քաղկացած նախագահություն էր, որոնցից չորս պատ-կանում էին նախագահին և մեկական Միգին, Բելյերին և Դիվերին»⁹: Մնացածները լուկ պահանջվող ինֆորմացիան էի ապահովում:

Քանի որ ժողովրդական լայն զանգվածների մասնակցությունը կարևորագույն քա-ղաքական որոշումների ընդունման գործընթացին համարվում է ժողովրդավարության չա-փանիշ, ապա հանրային որոշումները, որոնք հանդես են գալիս տեղական և կենտրո-նական իշխանության մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների ձևով, հատուկ նշանակություն են ստանում: Ընդ որում, ընտրությունները ոչ թե բառիս բուն իմաստով քաղաքական որոշումների ընդունման գործընթացներ են, այլ այնպիսի քա-ղաքական գործունեություն, երբ ընտրվում է քաղաքական էլիտա, որին ժողովուրդը լե-զիտիմ ձևով, սահմանափակ ժամկետով հանձնում է որոշում ընդունելու իր իրավունքը:

Ի տարբերություն խմբակալից որոշումների, հանրային որոշումների ընդունման ժա-մանակ քաղաքական լիդերի կամ պատգամավորության և նախագահական թեկնածուների շփուճը հատարական տարբեր խավերի հետ տեղի է ունենում միայն նախընտրական շրջայցերի և հանրահավաքների ժամանակ, որոնք հաճախ ունենում են ձևական, ցուցա-դրական բնույթ՝ և վատ են ապահովում ժողովուրդ և քաղաքական լիդեր հետադարձ կապը: Դեմոկրատական կառավարման պայմաններում ընտրողների լայն զանգվածների ա-ջակցությունը ստանալու ամենահեշտ միջոցը պուպուլիստական բանաձևերն են և մարդ-

** Նկատի է առնվում, որ տվյալ անձնավորությունը որոշումը բերում է վերջնական տեսքի, վերջնականորեն ձևակերպում, հստակեցնում է այն:

⁶ Տե՛ս Կ. Կ. Շե, Методы эффективной торговли, «Опыт лучшей торговой фир-мы года», М., 1986, էջ 185:

⁷ Տե՛ս Կ. Կ. Платонов, Краткий словарь системы психологических понятий, М., 1984, էջ 57:

⁸ Տե՛ս Խ. Смит, ՁԶՎ. աշխ., էջ 214:

⁹ Նույն տեղում, էջ 215:

կանց վրա անճանական «~~ազգայնագետ~~» ազդելու կարողությունը: Այդ երևույթը մեծ նշանակություն ունի և քաղաքական ~~բառեր~~ կուլտուրա անցող երկրներում, և այն երկրներում, որտեղ վերջինս գտնվում է ցածր մակարդակի վրա: Քաղաքականության անհատականացումը, քաղաքական ռեկլամի միջոցով քաղաքական գործիչների հաճախ ամիրական «կերպարների» ստեղծումը թույլ չեն տալիս բացահայտել բարձր մակարդակի որոշումների ընդունման գործընթացը ղեկավարելու թեկնածուի կարողությունը¹⁰: Սա հատկանշական է բոլոր դեմոկրատական երկրների համար և զանազանվում է քաղաքական կուլտուրայի մակարդակով, զանգվածային լրատվության միջոցների զարգացման աստիճանով և այլն:

Հանրային քաղաքական որոշումների ընդունման ժամանակ չափազանց մեծ է զանգվածային լրատվական միջոցների և հատկապես հեռուստատեսության դերն ու նշանակությունը: Քաղաքական պայքարում լրատվության զանգվածային միջոցների օգտագործման առաջնությունը պատկանում է ամերիկացիներին:

Դեռ 1936 թ., երբ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը վերընտրվեց ԱՄՆ-ի նախագահ, նրա մերձավոր օգնականներից մեկը՝ Բարիս, հայտարարեց. «Առանց ռադիոյի «Նոր կուրսի» թշնամիների՝ տոնաներով հրատարակած տպագիր պրոպագանդայի հետևանքով ստեղծված կեղծ տպավորությունը հաղթահարելու աշխատանքները կլինեին անհամեմատ ավելի բարդ և ազնվորեն ասած շուրջ նույնիսկ պարզապես անհնարին»¹¹: Ֆրանկլին Դ. Ռուզվելտը հաճախ ռադիոյով դիմում էր միլիոնավոր ամերիկացիների, մտերմիկ տոնով նրանց ներկայացնելով ընդունվելիք որոշումները, դրանց պատճառները: Այդ հաղորդումները կոչվում էին «գրույցներ բոխարիկի մոտ» և անմիջական, ճիշտ է միակողմանի, կապ էին ստեղծում լիդերի և ժողովրդական լայն զանգվածների միջև, և արդյունքում ապահովում էին սոցիալական լայն խավերի աջակցությունը նախագահին:

Հեռուստատեսությունը քաղաքական պայքարում օգտագործելու գործընթացի հիմքը դրվեց 1960 թ., Նիքսոն—Քենեդիի հեռուստատեսային նախընտրական բանավեճով: Դա ունեցավ մի շարք բացասական հետևանքներ: Փաստորեն հեռուստատեսությունը մուտք գործեց քաղաքական բնագավառ, իսկ վերջինս՝ հեռուստատեսության տարիք: Այսուհետ թեկնածուների մտահոգության գլխավոր առարկա են դառնում հեռուստատեսային լեզվի յուրահատուկ տարրերը, կոստյումի, փողկապի գույնը, լուսավորությունը, արտահայտչականությունը, համապատասխանությունը հեռուստակերպին, ինչը շեղում է մարդկանց ուշադրությունը լուծվելիք պրոբլեմներից և միջոցներից: Նրանց համար կարևոր են դառնում քաղաքական գործիչների արտաքին տեսքը, խոսքի համուշակականությունը և այլն¹²: Քաղաքականության մեջ հեռուստատեսության այդօրինակ կիրառման տեղափոխումը Հասսոսան, որտեղ քաղաքական ռեկլամին դիմագրավելու ունակությունները թույլ են, կարող է ստեղծել պոպուլիստական ուղղվածությամբ քաղաքական պայքարի ոչ ցանկալի համակարգ:

Քավական բարդ խնդիր է ամբոխի կողմից կամ հանրահավաքներում ընդունվող քաղաքական որոշումների ուսումնասիրությունը: Հարցն այն է, որ հանրահավաքի մասնակիցների և ամբոխի միջև եղած սահմանագիծը երբեմն չափազանց անորոշ է: Եթե մեկ որոշակի տեղում կենտրոնացված մարդկանց ղեկավարում է որոշակի կազմակերպություն, որն ունի իր հստակ քաղաքական ծրագիրը և նպատակները, սակայն չի ցանկանում ոչ-րանք մի որոշ ժամանակ բացահայտել, ապա ոչ խորը ուսումնասիրության դեպքում կարելի է և չնկատել հավաքված մարդկանց զանգվածին գործողության մղող ներքին ուժերը և կառավարման կենտրոնը: Մեկ այլ դեպքում քաղաքական կազմակերպությունը կարող է կազմակերպել հանրահավաք և ձգտելով ապահովել մասնակիցների առավելագույն քանակ՝ աչքաթող անել որակական փոփոխությունները, երբ հանրահավաքը վերածվում է ամբոխի, և անհնար է դառնում այն կառավարել:

Ամբոխում ընդունվող որոշումները հիմնականում զուրկ են ռացիոնալ հիմքից և հենվում են զգացմունքների վրա: Դրանք օպերատիվ կարգի, անմիջական կիրառվող որոշումներ են և սերտորեն, ոչ միջնորդավորված ձևով, կապված են քաղաքական գործողության հետ:

Հանրահավաքի և ամբոխի միջև նշված փոխհարաբերությունը հաշվի առնելով, կարող ենք ընդգծել, որ չափազանց կարևոր է տարանջատել ընդունված քաղաքական որոշումների արտաքին ձևն ու ներքին էությունը:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 242:

¹¹ Marvin R. Weisbord, Campaigning for President: A New Look at the Road to the House. New York, 1966, p. 140.

¹² Տե՛ս «Le nouvel etat du monde. Bilan de la decennie 1980—1990», P., 1990, էջ 144:

Կա մի կարևոր հանգամանք, որով իրաքից տարբերում են անհատական. խմբակա-
յին և հանրային որոշումները. դա ռիսկի նկատմամբ ունեցած վերաբերմունքն է: Ցան-
կացած քաղաքական որոշման ընդունում ռիսկ է: Այն կարող է լինել նպատակահարմար
և անշահախնդիր, այսինքն՝ ռիսկ հանուն ռիսկի: Քաղաքականության բնագավառում ռիս-
կի երկրորդ տեսակը ծայրահեղ վտանգավոր է, համարժեք է արկածախնդրությանը և
դատապարտելի է: Գոյություն ունի ռիսկի մակարդակների աստիճանակարգման Ու. Ռո-
ուվի կոնցեպցիան: Նա առանձնացնում է՝ 1) անթույլատրելի ռիսկի մակարդակ (ռիսկի
չափազանց բարձր աստիճան), 2) ռիսկի ցանկալի ռեդուկցիայի մակարդակ (ռիսկի բար-
ձր աստիճան), 3) ոչ ակտիվ ռիսկի մակարդակ (ռիսկի նորմալ աստիճան)¹³:

Պետք է հաշվի առնել, որ այս դասակարգումը մշակված է տնտեսական ռիսկի հա-
մար, և արժեքավորումը կատարվում է ծախս-շահույթ փոխհարաբերության հիման վրա:
Տարբերվում են ռիսկի հակում ունեցող մարդկանց երկու տեսակ՝ «խիզախ» և «զգույշ»:
Հետաքրքիր է, որ անձնական կյանքում «խիզախ» մարդիկ քաղաքական գործունեության
մեջ կարող են թափուկանին «զգույշ» լինել:

Ապացուցված է համարվում, որ խմբակային որոշումները ավելի շատ են հակված
ռիսկի, քան անհատական որոշումները: Հոգեբանները ձևակերպել են «ռիսկի տեղաշարժի
(տեղաշարժ դեպի ռիսկ)» կոնցեպցիան և խմբակային քննույննում տեսությունը, որոնց
համաձայն խմբակային որոշումները չեն կարող հանգեցնել անհատական որոշումների
գումարին: Ռիսկի տեղաշարժի երևույթը նշանակում է, որ խմբակային բանավեճից հետո
որոշումներում պարունակվող ռիսկի տոկոսը բարձրանում է¹⁴: Ըստ Ռ. Բրաունի առաջ
քաշած վարկածի՝ խմբակային որոշումների ընդունման ընթացքում խմբում իրենց կար-
գավիճակը բարձրացնելու համար նույնիսկ «զգույշ» մարդիկ ռիսկը ավելի բարձր գնա-
հատականի են արժանացնում, քան եթե իրենք այդ որոշումը ընդունեին միանձնյա կեր-
պով¹⁵: Նշվածը վերաբերվում է նաև հանրահավաքներում և ամբոխավարության պայ-
մաններում ընդունված որոշումներին:

Ավարտելով, նշենք, որ մեկ հուղվածի սահմաններում անհնար է նույնիսկ ամբողջո-
վին ներկայացնել տվյալ հարցի հետ առնչվող բոլոր հիմնախնդիրները: Հաշվի առնելով
նաև, որ տվյալ հոդվածի նպատակը ավելի շուտ գիտա-տեղեկատվական բնույթի է, նպա-
տակահարմար գտանք այսքանով սահմանափակվել:

М. Л. ШАХГЕЛЬДЯН — Кто принимает политические решения. — В статье пред-
ставлены некоторые проблемы роли и значения человеческого фактора в процессе
принятия политических решений во взаимосвязи с типологией и уровнями при-
нятия политических решений. Внимание заостряется на различии подходов политиче-
ских деятелей и экспертов-профессионалов—к принятию политических решений в
зависимости от их целей и интересов. Рассматриваются факторы риска, преобла-
дания рационального или эмоционального в зависимости от числа лиц, приня-
ющих решения. Освещаются также проблемы индивидуального и группового
предпочтения, использования СМИ в процессе принятия политических решений
широкими общественными слоями.

Статья носит преимущественно информационный характер.

¹³ Shtu «Society technology and risk assessment», L., 1980, XXVII, էջ 4—19.

¹⁴ Shtu A. П. Альгин, Риск и его роль в общественной жизни, М., 1989, էջ 57:

¹⁵ J. Brown, Social Psychology, New York, 1965.